

ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոս՝ կենսաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ս.Խ. Պիպոյանի

Լուսինե Գառնիկի Այդինյանի Գ.00.08 - «Կենդանաբանություն. մակաբուծաբանություն.
էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման «Կեռնեխների (Turdidae, Turdus) էկոլոգիան Ստեփանակերտ քաղաքում
և հարակից տարածքներում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Վերջին տասնամյակների ընթացքում Երկրագնդի բնակչության աննախադեպ աճը և մարդկանց կողմից քաղաքաշինության լայն ծավալներն էականորեն կրճատել են վայրի կենդանիների կենսամիջավայր հանդիսացող բնական տարածքները: Արդյունքում շատ տեսակներ վերացել են իրենց սկզբնական ապրելավայրերից և կրճատվել է նրանց արեալը, իսկ սակավ տեսակներ էլ, հարմարվելով նոր պայմաններին, վերածվել են սինանտրոպ տեսակների՝ որոշակիորեն ազդելով մարդու բնակավայրերի սանիտար-համաճարակաբանական և էկոլոգիական վիճակի վրա: Վերջին իրավիճակը և դրանից բխող հետևանքները դեռևս լիարժեք ուսումնասիրված չեն աշխարհում, հատկապես մեր տարածաշրջանում, ինչն էլ կարևոր է դարձնում սինանտրոպ կենդանիների համակողմանի ուսումնասիրությունը մարդկանց մեծ կուտակումներ ենթադրող քաղաքային պայմաններում: Այստեղից էլ բխում է Լուսինե Գառնիկի Այդինյանի կողմից պաշտպանության ներկայացրած «Կեռնեխների (Turdidae, Turdus) էկոլոգիան Ստեփանակերտ քաղաքում և հարակից տարածքներում» թեմայով ատենախոսության արդիականությունը: Նշված աշխատանքը նվիրված է Ստեփանակերտ քաղաքի և դրա հարակից տարածքներում թռչնաշխարհի տեսակային կազմի և բաշխվածության բացահայտմանը, ինչպես նաև այստեղ հանդիպող *Turdus* ցեղի կեռնեխների չորս տեսակի՝ սև կեռնեխի *Turdus merula* Linnaeus, 1758, սինակեռնեխի *Turdus pilaris* (Linnaeus, 1758), երգող կեռնեխի *Turdus philomelos* (Linnaeus, 1758) և սոսնձակեռնեխի *Turdus viscivorus* (Linnaeus, 1758) էկոլոգիական առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրմանը: Նշված աշխատանքը կատարվել է 2017-2023թթ. ընթացքում, որի նպատակն է եղել Ստեփանակերտ քաղաքում և հարակից տարածքների թռչնաշխարհի տեսակային կազմի, բաշխվածության, նշված տարածքում հարմարված ու մոդելային խումբ համարվող կեռնեխների էկոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունների ուսումնասիրումը, որի իրականացման համար ատենախոսն իր առջև դրել և փորձել է լուծել ատենախոսության մեջ թվարկված յոթ խնդիր:

Ատենախոսությունը ներկայացված է համակարգչային շարվածքով՝ 143 էջի վրա: Այն կազմված է ներածությունից, վեց գլխից, ամփոփումից, եզրակացություններից, 138 անուն պարունակող գրականության ցանկից, 72 էջից բաղկացած հավելվածից: Աշխատանքն ընդգրկում է 3 նկար, 35 գծապատկեր և 21 աղյուսակ:

Ատենախոսության առաջին գլխի 1.1 ենթագլխում գրական աղբյուրների հիման վրա ատենախոսը ներկայացնում է տեղեկություններ Արցախի պատմաաշխարհագրական և կլիմայական նկարագրի մասին: Գրական ակնարկի 1.2 ենթագլխում, որը վերնագրված է «Արցախում թռչունների հետազոտման պատմությունը», ատենախոսը բերում է տեղեկություններ Կովկասի, մասնավորապես Հայաստանի թռչնաշխարհի ուսումնասիրման հակիրճ պատմությունից և նշում է, որ Արցախի թռչնաշխարհի ուսումնասիրման մասին լիարժեք տեղեկությունները բացակայում են (ատենախոսության 9-ից 15 էջեր):

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է հետազոտության նյութին և ուսումնասիրությունների մեթոդներին: Այս գլուխը կարևոր նշանակություն ունի Լ. Այդինյանի ատենախոսության արդյունքներն ըստ արժանվույն գնահատելու համար: Այս գլխում բերված տվյալներից երևում է, որ ատենախոսն իր ուսումնասիրություններն իրականացրել է 2017-2023 թթ. ընթացքում, Ստեփանակերտ քաղաքի վարչական տարածքի քաղաքային բոլոր կենսամիջավայրերում: Միաժամանակ, հետազոտության օբյեկտ հանդիսացող կենդանիների բոլոր տեսակների ուսումնասիրության համար ընտրել է Ստեփանակերտ քաղաքի և հարակից տարածքների 8 տեղանք (ստացիոնար), որտեղ հետազոտություններ է կատարել տարվա բոլոր եղանակներին կենդանիների էկոլոգիական առանձնահատկությունները որոշելու համար թռչնաբանության մեջ ընդունելի մեթոդներով (ատենախոսության 16-ից 22 էջեր): Այստեղ հարկ է նշել, որ 2.2 Հետազոտման օբյեկտը և 2.3 Ուսումնասիրման մեթոդներ ենթագլուխներում բացակայում են հստակ մեթոդներ, ցուցումներ կամ մոտեցումներ, թե ինչպես են ուսումնասիրվել Ստեփանակերտ քաղաքի և նրա հարակից տարածքների թռչունների տեսակային կազմը և բաշխվածությունը:

Ատենախոսության երրորդ գլուխը (ատենախոսության 23-ից 28 էջեր) նվիրված է Ստեփանակերտ քաղաքում և դրա հարակից տարածքներում թռչունների տեսակային կազմին և բաշխվածությանը: Ատենախոսության մեջ նշվում է, որ ուսումնասիրված տարածքներում հանդիպում է 117 տեսակ թռչուն, որոնք պատկանում են 14 կարգի և 37 ընտանիքի: Այստեղ նշվում է նաև, որ Ստեփանակերտ քաղաքի և դրա հարակից տարածքների թռչնաշխարհի տեսակային կազմը ներկայացնում է Արցախի թռչնաշխարհի արձանագրված 223 տեսակի և ենթատեսակի 52.4 %-ը, չնայած այն բանին, երբ գլուխ 1-ում ատենախոսը նշում է, որ Արցախի թռչնաշխարհի կազմը մինչ այժմ ուսումնասիրված չէ ու չի բերում որևէ տեղեկություն կամ տվյալ այդ մասին գլուխ 1-ում ներկայացված գրական ակնարկում:

Ատենախոսության չորրորդ գլուխը (ատենախոսության 29-ից 44 էջեր) նվիրված է տարվա սեզոնից և կենսամիջավայրից կախված թռչունների տեսակային կազմին և քանակական փոփոխություններին: Այս գլխի 4.1 ենթագլխում ատենախոսը գլխավորապես գրական աղբյուրների հիման վրա ներկայացնում է թռչունների քաղաքային պոպուլյացիաների ձևավորման սկզբունքները, իսկ 4.2 ենթագլխում, հստակ

չտարանջատելով սեփական և գրական աղբյուրներից ստացված տվյալները, ներկայացնում է թոչունների բնակեցման դինամիկան ըստ տարվա սեզոնների և կենսամիջավայրերի:

Ատենախոսության հինգերորդ, առանցքային ու ծավալուն գլուխը (ատենախոսության 45-ից 109 էջեր) նվիրված է Ստեփանակերտում և դրա հարակից տարածքներում կեռնեխների չորս տեսակների համեմատական էկոլոգիային: Այս գլխում ատենախոսի կողմից կատարված ուսումնասիրությունների հիման վրա ներկայացված են հետազոտված տարածքներում կեռնեխների բոլոր չորս տեսակների բնադրման խտությունը և սեզոնային փոփոխականությունը (ենթագլուխ 5.1), բնադրման էկոլոգիան (բազմացման և ծվադրման ժամկետները, բնադրման վայրերը, բների քանակն առանձին տեղանքներում, ձվերի քանակը և չափերը բներում, ժամկետները, թխսակալումը, ճտահանության ելքերը) ըստ կեռնեխների առանձին տեսակների (ենթագլուխ 5.2):

Ատենախոսության վեցերորդ գլխում (ատենախոսության 110-ից 118 էջեր) Լ. Այդինյանը սեփական հետազոտությունների հիման վրա ներկայացնում է կեռնեխների կողմից կերահրապարակներին ներկայացվող պահանջներն ինչպես բնադրման, այնպես էլ աշնանային-ձմեռային շրջաններում (ենթագլուխ 6.1): Այս գլխում ուշադրություն է դարձված նաև կեռնեխների կերի կազմին, կերահրապարակների ընտրությանը կախված տարվա սեզոնից և բնակավայրի բնույթից: Ատենախոսը կեռնեխների օղակավորման միջոցով պարզել է նաև այդ թոչունների տեղաշարժերը տարվա ընթացքում, բաշխվածությունը տարբեր լանդշաֆտներում:

Ատենախոսության «Ամփոփում» բաժինը (ատենախոսության 119-129 էջեր) իր հիմնական բովանդակությամբ համեմատական վերլուծություն է նախորդ երկու գլուխներում կեռնեխների ուսումնասիրված բոլոր տեսակների էկոլոգիական առանձնահատկությունների մասին: Այստեղ ատենախոսը բերում է համեմատական աղյուսակներ և գծապատկերներ, որոնք ավելի հասկանալի են դարձնում կեռնեխների տարբեր տեսակների էկոլոգիական նմանություններն ու տարբերությունները: Եվ ամփոփման վերջում ատենախոսը փորձ է կատարել գնահատելու կեռնեխների դերն ու նշանակությունը քաղաքային էկոհամակարգերում, կարևորելով նրանց գյուղատնտեսության, էկոլոգիայի և գեղագիտական ազդեցության տեսակետից:

Ատենախոսության եզրակացությունները հիմնականում համապատասխանում են աշխատանքի նպատակին, իսկ դրված խնդիրների մեծ մասի լուծման բովանդակությունը սեփական դիտարկումների ու վերլուծությունների հիման վրա տրված է ինչպես եզրակացություններում, այնպես էլ ատենախոսության տարբեր գլուխներում և ենթագլուխներում:

Ատենախոսությունը շարադրված է գրագետ հայերենով, իսկ նրա սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

ինչպես յուրաքանչյուր գիտական աշխատանք, քննարկվող ատենախոսությունը նույնպես զերծ չէ որոշ թերություններից ու վրիպումներից, որոնցից կարելի է նշել հետևյալները.

1. Ատենախոսության 6-րդ խնդրում նշված է, որ պետք է կազմվեն քարտեզներ կեռնեխների տարածվածության գույքագրման համար: Սակայն ատենախոսության մեջ այդ առումով բերված է միայն մեկ քարտեզ (նկար 3), որտեղ բերված են բոլոր տեսակների տարածվածությունը միատեղ: Ցանկալի կլիներ, որ դրա հետ մեկտեղ լինեին տարբեր տեսակների համար առանձին-առանձին քարտեզներ, որոնք ավելի հստակ պատկերացում կտային Ստեփանակերտում և դրա հարակից տարածքներում կեռնեխների տարածվածության ու բաշխվածության մասին:

2. Ատենախոսության 2.2 Հետազոտության օբյեկտը ենթազվիսում նշվում է, որ ուսումնասիրությունների օբյեկտ են ընտրվել կեռնեխների չորս տեսակներն այն դեպքում, երբ ատենախոսության մեջ 3-րդ և 4-րդ գլուխները նվիրված են Ստեփանակերտում և դրա հարակից տարածքներում հանդիպող թռչունների տեսակային կազմի որոշմանը և բաշխվածությանը, և այս հանգամանքը հաշվի առնված չէ նաև “2.3. Ուսումնասիրության մեթոդներ” ենթազվիսում, որտեղ նշված չեն 117 տեսակի թռչունների 38164 առանձնյակների մասին տվյալներ հավաքելու մեթոդները:

3.2.3. Ուսումնասիրության մեթոդներ ենթազվիսում նշված է, որ դիտարկումներն իրականացվել են ըստ գծապատկեր 1-ի, որտեղ նշված թվային տվյալների հանրագումարը կազմում է 576 արշավ: Միաժամանակ, նույն տեղում ատենախոսը նշում է հաշվարկներ կատարելու հաճախականությունը՝ ամիսը չորս անգամ: Հաշվի առնելով, որ ատենախոսության համար ուսումնասիրությունները կատարվել են 7 տարվա ընթացքում (2017-2023թթ.), ապա պարզ մաթեմատիկական հաշվարկը (4x12x7) ցույց է տալիս, որ այդ ժամանակահատվածում ըստ կիրառված մեթոդի հնարավոր էր կատարել միայն 336 արշավ: Նման պարագայում անհրաժեշտ է հստակեցնել հաշվարկ կատարելու և դիտարկումների տարբերությունները, եթե կան, իսկ ուսումնասիրությունների քանակական տվյալներ ներկայացնելիս չպետք է հենվել որևէ գծապատկերի թվային արժեքների վրա, այլ պետք է ներկայացնել, թե ինչպես են ստացվել դիտարկումների թվային արժեքները և անհրաժեշտության դեպքում այն արտացոլել աղյուսակում կամ գծապատկերում:

4. Ատենախոսության 4-րդ գլխի ձևակերպումը ընդհանուր է և կարծես թե չի վերաբերում ուսումնասիրվող տարածքին: Միաժամանակ, այդ գլխի առաջին՝ “4.1. Թռչունների քաղաքային պոպուլյացիաների ձևավորման ընդհանուր սկզբունքները” ենթազվիսն իր բնույթով գրական ակնարկ է և ցանկալի էր այն միավորել առաջին գլխի բովանդակությանը՝ առանձին ենթազվիսով: Նույն կերպ նախընտրելի էր ատենախոսության 6-րդ “Կեռնեխների կերահրապարակները, կերի կազմը և սեզոնայնությունը” գլուխն առանձին ենթազվիսներով միացվեր նախորդ 5-րդ “Կեռնեխների տեսակների

համեմատական էկոլոգիան Ստեփանակերտում և հարակից տարածքներում” գլխին, քանի որ 6-րդ գլխի բովանդակությունը նույնպես կենսեխնների էկոլոգիային է վերաբերում:

5. Ատենախոսության հավելվածի առանձին նկարներ անփույթ են ձևավորված, որոնց որոշ մասը նաև մակագրված չէ: Միաժամանակ, հավելվածի աղյուսակների համարակալումները և դրանց պարզաբանումները կատարված են ներկայացվող պահանջներին ոչ համապատասխան:

Ամփոփելով վերոգրյալը, կարելի է եզրակացնել, որ կատարված դիտողությունները չունեն սկզբունքային բնույթ և չեն կարող էապես ազդել կատարված աշխատանքի որակի վրա: Այսպիսով, քննարկվող ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին պաշտոնապես ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Լուսինե Գառնիկի Այդինյանն արժանի է կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Միաժամանակ կարևոր է նշել, որ ատենախոսության արդյունքները և հետևությունները կարելի է օգտագործել կենսաբանական ուղղվածություն ունեցող բուհերի (Երևանի պետական համալսարան, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայաստանի ագրարային ազգային համալսարան, այլն) մասնագիտական առարկայական ծրագրերի (կենդանաբանություն, էկոլոգիա, կենսաշխարհագրություն) մշակման ու հետագա դասավանդման ընթացքում, ինչպես նաև քաղաքային կանաչապատում իրականացնող կազմակերպությունների բնապահպանական գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով: Ատենախոսության առանձին դրույթներ կարող են օգտակար լինել հանրակրթական դպրոցներում “Կենսաբանություն” առարկայից նախագծային աշխատանքներ կատարելու ընթացքում

Պաշտոնական ընդդիմախոս,
կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ս.Ս. Պիպոյան

Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Սամվել Խաչատուրի Պիպոյանի ստորագրությունը հաստատում եմ:

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ



Մ. Խաչիրյան

“ 10 “ փետրվարի 2025 թ.